ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/1-3/26433-16
28.11.16

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱ
ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ-Ի

Ի պատասխան Ձեր՝ նոյեմբերի 21-ի թիվ 310 գրության՝ հայտնում ենք, որ տեղեկատվության ազատության ապահովման գործառույթը ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. ապրիլի 15-ի N 25-Ա հրամանով վերապահված է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (նշյալ գործառույթներն ամրագրված են նշված բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով), ինչպես նաև 2016 թ. նոյեմբերի 24-ի 1648-Ա հրամանով նախարարի մամուլի քարտուղարին: Տեղեկատվության ազատության ապահովման համար ժամանակավոր պատասխանատու անձը նախարարի մամուլի քարտուղար Լուսինե Մկրտչյանն է:

Մամուլի քարտուղարի և բաժնի կոնտակտները տեղադրված են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում (http://bit.ly/2fRhb6u): Կից ներկայացվում է «Լուսինե Մկրտչյանին տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու նշանակելու մասին» N 1648-Ա հրամանի պատճենը:

Առդիր՝ 1 էջ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«24» Նոյեմբերի 2016թ. № 1648-Հ

ՀՐԱՄԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի <<Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին>> N 1204-Ն որոշման հավելված 1-ի 2-րդ կետը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 503-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Տեղեկատվության ազատության ապահովման համար ժամանակավոր պատասխանատու նշանակել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի մամուլի քարտուղար Լուսինե Մկրտչյանին:

Վ. ԱՐԱՄՅԱՆ